ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴՐ ԿԱՐԴԱԼ

State of California
Health and Human Services Agency
California Department of Social Services
Adult Programs Division

Հարգելի IHSS Մատակարար,

2021 թվականի Հուլիսի 1-ին, Դուք կստանաք/կվճարվեք 16 ժամ՝ հիվանդության պատճառով բացակայության դեպքում:

Եթե Դուք նոր մատակարար եք և դեռ չեք վաստակել Ձեր հիվանդության պատճառով բացակայության ժամերը՝ աշխատելով ընդհանուր առմամբ 100 ժամ՝ լիազորված ծառայություններ տրամադրելով IHSS մեկ կամ մի քանի ստացողների համար, ապա Դուք կստանաք Ձեր 16 ժամը միայն այն դեպքում, երբ աշխատեք պահանջվող 100 ժամը: Սակայն, Դուք չեք կարող այդ հիվանդության պատճառով բացակայության 16 ժամն օգտագործել, մինչև չաշխատեք ևս լրացուցիչ 200 ժամ կամ 60 օրացուցային օր՝ կախված այն բանից, թե որն է առաջինը լրանում:

2021 թվականի Հուլիսի 1-ին կամ դրանից հետո ստացված հիվանդության պատճառով բացակայության բոլոր ժամերը պետք է օգտագործվեն մինչև 2022 թվականի Հունիսի 30-ը: Ցանկացած չօգտագործված հիվանդության բացակայության ժամ կսպառվի այդ ժամանակահատվածում և եթե չօգտագործեք այդ ժամերը, ապա կկորցնեք:

Եթե Ձեր հիվանդության բացակայության ժամերի հետ կապված որևէ հարց ունեք, ապա կարող եք զանգահարել Ձեր վարչաշրջանի IHSS գրասենյակ կամ դիմել պետական մարմիններին:

Շնորհակալություն: